



Եվրոպական միության ECEILAW ծրագիր Հայաստանում
Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն

Տեղեկատվական պարբերական

«Եվրոպան այսօր»

(հանդես I)



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Ծրագիրը իրականացվում է
GOPA Խորհրդատվական
ընկերության կողմից

Սույն հրապարակման նպատակն է բարձրացնել Եվրոպական Միության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը: Բրոշուրում զետեղված են վերջին մի քանի ամիսների ընթացքում Եվրոպական միությունում տեղի ունեցած նշանակալի դեպքերի և տարբեր հետազոտությունների արդյունքների վերաբերյալ տեղեկություններ, որոնք վերաբերում են հասարակական կյանքի տարբեր կողմերին:

Եվրոպական միության վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ հասանելի են ԵՄ պաշտոնական կայքում՝ <http://europa.eu>

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ԵՊՀ իրավաբանական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողներին, որոնք անցնելով իրենց աշխատանքային պրակտիկան Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնում, նշանակալի ներդրում ունեցան այս բրոշուրի մշակման գործում:

Խմբագիր, Արթուր Ղազինյան, Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի տնօրեն:

Աշխատանքային խմբի ղեկավար՝ Լիլիթ Հակոբյան, Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի միջազգային հարաբերությունների հարցով փորձագետ:

Անդամներ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողներ՝ Մայա Ալեքսանյան, Հայկ Կարապետյան, Արման Սարգսյան և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողներ՝ Արմեն Զոհրաբյան, Հայարփի Դրմեյան:

Սույն հրատարակումը իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրատարակման բովանդակության համար պատասխանատու է միայն Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը, և այն չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

This publication has been produced with the assistance of the European Union. The content of this publication is the sole responsibility of the Centre of European Law and Integration and can in no way be taken to reflect the views of European Union.




*This project is funded
By European Union*

GOPA
WORLDWIDE CONSULTANTS

GOPA Consultants

Եվրոպական Միություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



http://europa.eu/abc/index_en.htm

Եվրոպական Միությունը Եվրոպական դեմոկրատական պետությունների ընտանիք է, որոնք պարտավորվել են պայքարել միասին՝ հանուն խաղաղության և բարգավաճման: Այն՝ ոչ պետություն է, որը պետք է փոխարինի գոյություն ունեցող պետությունները, և ոչ էլ պարզապես միջազգային

համագործակցության համար ստեղծված կազմակերպություն:

ԵՄ-ն իրականում շատ յուրահատուկ է: Դրա անդամ պետությունները ընդհանուր ինստիտուտներ են ստեղծել, որոնց նրանք պատվիրակել են իրենց ինքնիշխանության մի մասը, այնպես, որ ընդհանուր շահերին վերաբերող որոշ հարցերի կապակցությամբ կարող են որոշումներ կայացվել Եվրոպական մակարդակում՝ ժողովրդավարական ձևերով:

ԵՄ-ի պատմական ակունքները թաքնված են երկրորդ համաշխարհային պատերազմում: ԵՄ ստեղծելու գաղափարը ծնվեց այն պատճառով, որ եվրոպացիները նպատակադրվեցին ստեղծել և գործարկել մայրցամաքում խաղաղության և կայունության պահպանման և հակամարտությունների կանխարգելման համար իրական երաշխիքներ: Ինտեգրման գործընթացի նախնական փուլում բանակցություններին ներգրավված էին Արևմտյան Եվրոպայի միայն վեց պետություններ, որոնք համաձայնության եկան համատեղ գործողություններ ձեռնարկել հիմնականում տնտեսության և առևտրի ոլորտներում: Ներկայումս ԵՄ-ն ընդգրկում է 27 անդամ պետություններ, որոնք ընդհանուր թվով միավորում են ավելի քան 490 մլն մարդ, և իր գործունեության ընթացքում Միությունը առչվում է առօրյա կյանքում ուղղակի կարևորություն ունեցող բազմաթիվ հարցերին:

Եվրոպա աշխարհամասը հարուստ է շատ տարբեր ավանդույթներով և լեզուներով, ինչպես նաև այնպիսի ընդհանուր արժեքներով, ինչպիսիք են ժողովրդավարությունը, ազատությունը, իրավունքի գերակայությունը և հասարակական արդարությունը: Այս արժեքները պաշտպանվում են ԵՄ-ի կողմից: Այն համագործակցություն է ծավալում Եվրոպայի ժողովուրդների միջև՝ խրախուսելով միասնությունը և պահպանելով ազգային բազմազանությունը, միևնույն ժամանակ երաշխավորելով որոշումների կայացումը հասարակության հնարավորինս ակտիվ մասնակցությամբ:

21-րդ դարի աստիճանաբար անկախացող աշխարհում ավելի քան երբևէ կարևոր է, որ Եվրոպայի յուրաքանչյուր քաղաքացի հետաքրքրության, թափանցիկության և միասնության ոգով շփվի այլ երկրների ժողովուրդների հետ:

ԵՄ խորհրդանիշները

1. ԵՄ դրոշը
2. ԵՄ հիմնը
3. Եվրոպայի օր՝ մայիսի 9-ը
4. «Միասնություն բազմազանության մեջ» կարգախոսը

Դրոշի պատմությունը



Դրոշի պատմությունը սկսվում է 1955 թվականից: Այդ ժամանակ Եվրոպական Միությունը գոյություն ուներ որպես Պողոսատի և ածխի եվրոպական ընկերակցություն՝ ընդամենը 6 անդամ պետություններով: Բայց առավել մեծաքանակ անդամակցություն ունեցող առանձին մարմին հանդիսացող Եվրոպայի Խորհուրդը մի քանի տարի առաջ էր հիմնվել և զբաղվում էր մարդու իրավունքների պաշտպանությամբ և Եվրոպական մշակույթի զարգացմամբ:

Եվրոպայի խորհուրդն իր սեփական գործածության համար մշակում էր խորհրդանշի տարբերակներ: Երկար քննարկումներից հետո հաստատվեց ներկայիս գործող խորհրդանիշը՝ շրջան՝ 12 ոսկե աստղերով, կապույտ ֆոնի վրա: Տարբեր մշակույթներում «12-ը» կատարելության խորհրդանիշն է: Դա նաև տարվա ամիսների և ժամացույցի ժամերի քանակն է: Բացի դրանից շրջանը միասնության խորհրդանիշ է: Այսպիսով, Եվրոպական դրոշը ստեղծվել է Եվրոպայի ժողովուրդների միջև միասնության իդեալն արտահայտելու համար:

Եվրոպայի խորհուրդը կոչ արեց Եվրոպական մյուս ինստիտուտներին հաստատել միևնույն դրոշը և 1983թ-ին Եվրոպական խորհրդարանը արձագանքեց այդ կոչին: Վերջապես 1985թ-ին դրոշն արդեն հաստատվել էր բոլոր ԵՄ անդամ պետությունների ղեկավարների և կառավարությունների կողմից՝ որպես ԵՄ-ի պաշտոնական խորհրդանիշ, որն այն ժամանակ կորվում էր Եվրոպական տնտեսական ընկերակցություն:

Բոլոր Եվրոպական ընկերակցությունների ինստիտուտները օգտագործում են այս խորհրդանիշը 1986թ-ի սկզբից: Եվրոպական դրոշը Եվրոպական հանձնաժողովի միակ խորհրդանիշն է: ԵՄ մյուս ինստիտուտները և մարմինները բացի Եվրոպական դրոշից ունեն իրենց սեփական խորհրդանիշները:

Եվրոպական օրհներգը

Եվրոպայի օրհներգը սահմանված է ոչ միայն Եվրոպական Միության, այլ ողջ Եվրոպայի համար: Երաժշտությունը վերցված է 1823թ-ին Լյուդվիգ Վան Բեթհովենի կողմից գրված 9-րդ սիմֆոնիայից: Միմֆոնիայի ամբողջականության համար Բեթհովենը երաժշտությանը կցեց 1875թ-ի Ֆ. Վ. Շիլլերի կողմից գրված «Ձոն երջանկության» պոեմը:

Այդ պոեմը արտահայտում է Շիլլերի մարդկային ցեղը եղբայրության վերածելու իդեալիստական տեսակետը: Շատ հայտնի նվագավար Հ. Ն. Կարայանին խնդրեցին գրել 3 գործիքային ստեղծագործություն՝ դաշնամուրի, փողային գործիքների և սիմֆոնիկ նվագախմբի համար:

1972թ.-ին Եվրոպայի խորհուրդը հաստատեց Բեթովենի “Ձոն երջանկության” ստեղծագործությունը որպես սեփական օրհներգ: Առանց խոսքերի՝ երաժշտության համընդհանուր լեզվով այս օրհներգն արտահայտում է ազատության, խաղաղության գաղափարները, որոնք պաշտպանում է Եվրոպան: 1985թ.-ին այն հաստատվեց ԵՄ անդամ պետությունները ղեկավարների և կառավարությունների կողմից՝ որպես ԵՄ պաշտոնական օրհներգ: Այն նպատակ չունի փոխարինելու անդամ պետությունների ազգային օրհներգերը, այլ տոնելու այն արժեքները, որոնք իրենք կիսում են՝ միասնությունն ու համախմբվածությունը ազգերի բազմազանության մեջ:

ՄԱՅԻՍԻ 9-Ը

Մայիսի 9-ին Ռոբերտ Շումանը ներկայացրեց միավորված և կազմակերպված Եվրոպայի ստեղծման առաջարկը որպես պարտադիր պայման խաղաղ հարաբերություններ պահպանելու համար: Առաջարկը, որը հայտնի է որպես “Շումանի հռչակագիր”, համարվում է այն վերաբերական ինտեգրացիոն կազմակերպության սկիզբը, որն այժմ կոչվում է Եվրոպական Միություն:

Ներկայումս, մայիսի 9-ը դարձել է Եվրոպական խորհրդանիշ (Եվրոպայի օր), որը դրոշի, օրհներգի, կարգախոսի և միասնական դրամական միավորի (եվրոյի) հետ միասին, արտահայտում է Եվրոպական Միության քաղաքական միասնությունը: Եվրոպայի օրը բազմաթիվ տոնակատարություններ և միջոցառումների անցկացնելու առիթ է՝ Եվրոպային իր քաղաքացիների, իսկ Միությանն իր ժողովուրդների հետ մերձեցնելու համար:

»ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

http://europa.eu/abc/symbols/motto/index_en.htm

«Միասնությունը բազմազանության մեջ» Եվրոպական Միության կարգախոսն է: Այն առաջին անգամ կիրառության մեջ է մտել 2000թ.-ին և առաջին անգամ պաշտոնապես նշվել է Եվրոպայի Սահմանադրության ստեղծման պայմանագրում, որը ստորագրվել է 2004թ.-ին: Փաստաթղթի 1-8-րդ հոդվածը սահմանում է Եվրոպական Միության խորհրդանիշները:



Կարգախոսը նշանակում է, որ ԵՄ-ի միջոցով, եվրոպացիները միասնական են խաղաղության և թափանցիկության համար մղվող պայքարում, և որ Եվրոպայում

գոյություն ունեցող բազմաթիվ տարբեր մշակույթներ, ավանդույթներ և լեզուներ այդ աշխարհամասի հարստությունն են:

ԼԵԶՈՒՆԵՐ

Եվրոպան հարուստ է իր բազմաթիվ լեզուներով: ԵՄ-ում հիմնական լեզվաընտանիքներն են գերմանական, ռոմանական, սլավոնական, բալթյան և կելթյան լեզվաընտանիքները:

ԵՄ ինստիտուտներն ունեն 21 պաշտոնական լեզուներ, սակայն կան նաև բազմաթիվ քիչ գործածվող լեզուներ: ԵՄ կայքում հնարավորություն է ընձեռում լսել այդ լեզուներով հնչողող օրինակները:

ԵՎՐՈ

Եվրոն հանդիսանում է օրինական վճարման միջոց Ավստրիայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Իտալիայի, Իռլանդիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների, Պորտուգալիայի, Սլովենիայի և Իսպանիայի ավելի քան 300 միլիոն բնակչության համար:



Եվրոն օգտագործվում է նաև Անդորրայում, Մոնակոյում, Սան Մարինոյում, Վատիկանում, Կոսովոյում, Չեռնոգորիայում, Արևմտյան Բալկաններում, ինչպես նաև Ազորներում, Կանարյան կղզիներում, Ֆրանսիական Գվիանայում, Գվադիլուպեում, Մադեյրայում, Մարտինիկեում, Մայոտայում, Ռինյոնում, Սենտ Պիեռում և Միկելոնում, որոնք բոլորն էլ ԵՄ այն պետությունների

մասերն են, որ օգտագործում են Եվրոն:

Եվրոյի թղթադրամները նույնն են բոլոր երկրներում, բայց յուրաքանչյուր երկիր թողարկում է իր սեփական մետաղադրամները, որի մի կողմը ընդհանուր է, իսկ մյուս կողմում պատկերված է տարբերակող ազգային խորհրդանիշ: Մոնակոն, Սան մարինոն և Վատիկանը նույնպես ունեն իրենց սեփական մետաղադրամները: Բոլոր թղթադրամներն ու մետաղադրամները կարող են օգտագործվել Եվրոյի տարածքի ցանկացած վայրում:

Եվրոն լայն հնարավորություններ է սահմանում ինչպես անհատն քաղաքացիների, այնպես էլ մասնավոր ընկերությունների և բիզնեսի այլ ներկայացուցիչների համար: Անհատները հնարավորություն են ստանում կատարել խնայողություններ և այլևս ստիպված չեն փոխանակել դրամը ԵՄ եվրոյի մասնակից անդամ-պետությունների տարածքով ճանապարհորդելիս: Սպառողները կարողանում են համեմատել գները ավելի հեշտ, ինչը խթանում է գների մրցակցությանը: Բիզնեսի ներկայացուցիչները՝ բացի վերը նշված առավելություններից, հնարավորություն են ստանում առավել պարզեցված ընթացակարգով հաշիվներն ընդունել եվրոյով, ինչը ինքնին նվազեցնում է իրենց արտարժույթի կիրառման և կոնվերտացիայի հնարավոր ռիսկի գործակիցը:

Հիմնարար իրավունքների պաշտպանությունն ու երաշխավորումը

Ի սկզբանե Եվրոպական Միությունը հիմնված է եղել մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական ինստիտուտների, օրենքի և իրավունքի գերակայության վրա:

Այս արժեքները սահմանված են «Հիմնարար իրավունքների Եվրոպական Խարտիայում», որը մեկ միասնական փաստաթղթում միավորում է բոլոր անձնական, քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքները, որոնցից օգտվում են ԵՄ քաղաքացիները: Խարտիան, որն ընդունվել է 2000թ-ի դեկտեմբերին Նիսի Եվրոպական խորհրդի կողմից, հաստատում է գոյություն ունեցող իրավունքները և նախատեսում է նոր դրույթներ, որոնք առաջացել են տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում, ինչպիսիք են կենսա-բարոյականության և տվյալների պաշտպանությունը:

Ամենահիմնական ազատությունը, որից օգտվում են ԵՄ քաղաքացիները՝ մի երկրից մեկ այլ երկիր ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքն է: Չնայած այս իրավունքը սահմանված է Եվրոպական Միության և Ընկերակցությունների հիմնադիր պայմանագրերում, այն տեղ գտավ «Շենգենյան համաձայնագրում», որը ուժի մեջ է մտել 1996թ-ին և կոչված էր իրական նախադրյալներ ստեղծել միասնական շուկայի համար կենսական կարևորություն ներկայացնող այս իրավունքի առավել ամբողջական պաշտպանության և իրականացման համար: Ներկայումս, ԵՄ քաղաքացիները, առանց պարտավորված լինելու ցույց տալ իրենց անձնագրերը կամ անձը հաստատող փաստաթղթերը, կարող են հատել ներքին ցամաքային սահմանները Շենգենյան տարածքում: Այն ընդգրկում է Միության 13 անդամ պետությունների տարածքները, բացառությամբ Մեծ Բրիտանիային, Իռլանդիային և այն 12 երկրներին, որոնք միացան 2004 և 2007 թվականներին:

Այս կարևորագույն իրավունքից օգտվում են նաև 5 միլիոնի հասնող երրորդ պետությունների քաղաքացիները, որոնք ներկայումս աշխատում են Միության անդամ-պետություններում: Ընդհանուր ընթացակարգեր են առաջ քաշվել կարգավորելու համար այնպիսի հարցեր, ինչպիսիք են ընտանիքի վերամիավորումը և նորեկներին անձանոթ միջավայրում ինտեգրելու միջոցները:

Ապաստան և ներգաղթ

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ բավականին մեծ թվով երրորդ պետությունների քաղաքացիներ, որոնք պատերազմից, հետապնդումներրց և բնական աղետներից խուսափելու կամ բարեկեցիկ ապագա կառուցելու համար ամեն գնով փորձում են մուտք գործել Միության տարածք, ԵՄ պետությունների կառավարությունները միասնական լուծումներ են մշակում այս ոլորտում բոլորի համար ընդհանուր մարտահրավերներին դիմակայելու համար: Միության ինստիտուտների կողմից մշակվում են նվազագույն ստանդարտներ, չափանիշներ և ընթացակարգեր, որոնց հիմնական նպատակն է օժանդակել ապաստան հայցողներին, որպեսզի վերջիններս տեղեկացված լինեն, թե ինչպես և երբ պետք է քննարկվեն իրենց դիմումները, պարզաբանվեն

ապաստան շնորհված մարդկանց կարգավիճակի հետ կապված հարցերը և հստակեցնեն իշխանությունների դերը այս պարտավորությունների կատարման գործում:

Միևնույն ժամանակ, Միությունը որոշել է վերացնել ապօրինի ներգաղթը և կանխել այն չարաշահումները, որոնք կապված են բարեխիղճ գաղթականների տնօրինման համակարգի հետ և երաշխավորել իր սեփական քաղաքացիների անվտանգությունը: Սա ընդգրկում է ԵՄ արտաքին սահմանների ընդլայնումը, մասնավորապես արևելքում և հարավում: Ըստ այդմ նորանդամ պետությունները, որոնք աշխարհագրական դիրքի պատճառներով այժմ ստանձնում են այս սահմանների մեծ մասի կառավարումը, պետք է այս ուղղությամբ իրենց վրա վերցնեն նոր պարտավորություններ: Նրանք կարող են ակնկալել և ստանալ ԵՄ ֆինանսական օժանդակություն սահմանապահների, ոստիկանության և մաքսատան աշխատողների միջև լայնածավալ համագործակցության, ինչպես նաև այնպիսի նոր տեխնոլոգիաների մշակման համար, ինչպիսիք են մատնահետքերի և անհատական տվյալների համակարգչային նույնացումը:

Միությունը ակտիվ աշխատանք է ծավալում խոշոր ներգաղթի աղբյուր հանդիսացող երկրներում՝ այնտեղ ապրող քաղաքացիների ապագան իրենց իսկ հայրենիքում բարելավելու համար: Գոյություն ունեն հատուկ ծրագրեր, որոնք նվիրված են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համար երաշխիքների և գործուն մեխանիզմների հաստատմանը, ժողովրդավարության ինստիտուտների կայացմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև տնտեսական զարգացումն ապահովելու շուկայական տնտեսության ինստիտուտների զարգամանը: Կիրառվում են նաև ընթացակարգեր, որոնց համաձայն ապօրինի ԵՄ մտնելու փորձ կատարած և բացահայտված գաղթականները իրենց կառավարությունների հետ կնքած պայմանագրիի ուժով կվերադարձվեն իրենց երկիր:

2. Երիտասարդությունը Եվրոպայում

Երիտասարդների համար հնարավորությունների ստեղծում

(http://europa.eu/abc/index_en.htm)

Երիտասարդներին ընդգրկող Միության կողմից իրականացվող քաղաքականությունները չեն սահմանափակվում միայն կրթական ծրագրերով: ԵՄ պետությունների և կառավարությունների ղեկավարները 2005թ. մարտին ընդունեցին Եվրոպական Երիտասարդության վերաբերյալ համաձայնագիր: Այն ընդհանուր սկզբունքներ է հաստատում երիտասարդների համար աշխատատեղերի ստեղծման գործում՝ ապահովելով կրթության միջոցով մի շարք հիմնարար հմտությունների ձեռքբերում,



ինչպես նաև հավասարակշռում աշխատանքային և առողյա կյանքի միջև:

Բացի վերը նշվածից, ԵՄ-ի Երիտասարդության ծրագիրը խրախուսում է ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին և նախագծերին, որոնք երիտասարդներին տալիս են

ԵՄ քաղաքացի լինելու գիտակցման զգացում և զարգացում են նրա նախաձեռնողական, ստեղծագործական և գործարարական ոգին: Ընդհանուր վերցրած ԵՄ-ը 2007-2013թթ. ընթացքում նշված ծրագրերի իրականացման համար ներդնելու է մոտավորապես 900 միլիոն եվրո:

Այլ երկրներում ապրելու, սովորելու և աշխատելու այն հնարավորությունները, որոնք ԵՄ-ը ընձեռում է իր քաղաքացիներին, մեծապես նպաստում է անդամ-պետությունների միջմշակութային մերձեցմանը, անհատական զարգացմանը և ԵՄ-ի տնտեսական ողջ հնարավորության իրագործմանը: Ամեն տարի ավելի քան մեկ միլիոն ԵՄ քաղաքացի՝ առանց տարիքային սահմանափակման, օգտվում է ԵՄ կողմից հովանավորվող կրթական, միջնակարգ մասնագիտական և քաղաքացիական հասարակության կառուցման նվիրված ծրագրերից:

ԵՄ-ի 2010թ.-ի Ուսուցման և մասնագիտական վերապատրաստման ծրագիրը հիմք է դնում ազգային և ԵՄ-ի համագործակցության քաղաքականության հայեցակարգին, իսկ ինտեգրմանն ուղղված գործունեության նախագիծը հիմք է հանդիսանում 2007-2013 թթ. ընթացքում ԵՄ-ի կողմից հովանավորվող ծրագրերի համար¹: Երկուսն էլ ընդունում են բարձարագույն և միջնակարգ մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման կենտրոնական դերը ԵՄ-ի աշխատատեղերի թվի ավելացման ռազմավարությունում, ինչպես նաև դրանց կենսական հասարակական ուղղվածությունը: Ուսուցումը և վերապատրաստումը կատարելագործում են միասնական արժեքների, հավասար հնարավորությունների և հասարակական ակտիվության նկատմամբ մեր բոլորիս պատկերացումները: Գոյություն ունի նաև դրական հարաբերակցություն ուսուցման, վերապատրաստման, առողջության, շրջակա միջավայրի, կյանքի ընդհանուր որակի և հանցավորության մակարդակի միջև:

Եվրոպական Միության կողմից ներկայումս իրականացվում են հետևյալ կրթական և գիտական ծրագրերը, որոնք հասցեագրված են ինչպես ԵՄ, այնպես էլ երրորդ պետությունների քաղաքացիներին.

- *Լեռնարդո դա Վինչի ծրագիրը* ֆինանսավորում է միջնակարգ մասնագիտական վերապատրաստումը, մասնավորապես երիտասարդ աշխատողների և վերապատրաստողների աշխատանքի ընդունվելու գործընթացը իրենց սեփական երկրից դուրս գտնվող ձեռնարկություններում, ինչպես նաև համագործակցության նախագծերը, որոնց միջոցով իրար են կապվում միջնակարգ մասնագիտական վերապատրաստման հաստատությունները և ձեռնարկությունները: Այդ ամենի նպատակն էր մինչև 2013 թ. տարեկան ստեղծել 80 000 նոր աշխատատեղ:

- *Իրասնուս ծրագրի* նպատակն է ֆինանսական աջակցություն ցուցաբերել ուսանողների փոխանակման և միջհամալսարանական համագործակցության ծրագրերին: Մոտ 150 000 ուսանողներ տարեկան ուսանում են այս ծրագրի շրջանակներում: Գործում է

¹ ԵՄ-ի 2010թ.-ի Ուսուցման և մասնագիտական վերապատրաստման ծրագիրը համաձայնացվել է Եվրոպական Խորհրդի կողմից 2002 թվականին որպես կարևորագույն ներդրում Լիսաբոնյան ռազմավարության իրականացման գործում: Ծրագրի նպատակն է մոդերնիզացնել և համապատասխանեցնել կրթական և վերապատրաստման ծրագրերը ժողովրդագրական, գլոբալիզացիոն և գիտելիքի վրա հիմնված հասարակության մարտահրավերներին:

նաև «Իրասմուս Մոնդուս» ծրագիրը, որի շրջանակներում աշխարհի տարբեր երկրների մոտ 2000 ուսանողներ և գիտնականներ ստանում են մագիստրոսի կոչում՝ ներգրավվելով նվազագույնը երեք եվրոպական համալսարաններից կազմված կոնսորցիումի կազմակերպած դասընթացներին:

- *Գրունդվիգ ծրագիրը* ֆինանսավորում է մեծահասակների կրթական ծրագրերը, մասնավորապես ազգամիջյան գործընկերությանը, կապերին և ակտիվությանը: Ծրագրի նպատակն է մինչև 2013թ. ֆինանսավորել տարեկան 7000 մարդու վերը նշված ոլորտներում ակտիվ գործունեությունը:

- *Կոմենիուս ծրագիրը* նպատակ է հետապնդում աշակցել դպրոցների և ուսուցիչների միջև համագործակցությանը: Որպես Ծրագրի վերջնական նպատակ դիտարկվում է 2007-ից 2013 թթ. ընթացքում ծրագրում ներգրավել երեք միլիոն աշակերտներ:

Նախատեսված են նաև որոշակի ֆինանսական միջոցներ տարբեր քաղաքականությունների ոլորտում համագործակցության, լեզուների ուսուցման, էլեկտրոնային ուսուցման, օգտակար փորձառության փոխանակման և տարածման համար:

Միությունը, բացի վերը նշված կրթական ծրագրերից, խրախուսում է մասնագիտական վերապատրաստումը նաև Յեդեֆոնի ծրագրի միջոցով, որի շրջանակներում ստեղծվել է Մասնագիտական նախապատրաստման և զարգացման Եվրոպական կենտրոն և գտնվում է Սալոնիկում: Սեդեֆոնը նախատեսում է գիտական և տեխնիկական գիտելիքների ձեռք բերում գիտության տարբեր ճյուղերից և խրախուսում է գաղափարների փոխանակումը տարբեր եվրոպական գործընկերների միջև:

Միջազգային համագործակցության խրախուսումը: Ի՞նչ է էրազմուս Մոնդուսը

(<http://ec.europa.eu/education/programmes...>)

ԵՄ-ն խրախուսում է համագործակցությունը կրթական ոլորտում, դասախոսների և ուսանողների փոխանակումները և եվրոպական ինտեգրման նվիրված դասընթացների կազմակերպումը աշխարհի ավելի քան 80 երկրներում՝ Մոնդոլիայից մինչև Մեքսիկա և Ալժիրից մինչև Ավստրալիա: Նշված գերակայությունների իրականացման համար Միությունը որպես գործիք կիրառում է Էրազմուս Մոնդուս և Տեմպուս ծրագրերը:

«Էրասմուս Մոնդուս» ծրագիրը հանդիսանում է բարձրագույն կրթության ոլորտում միջբուհական համագործակցության և ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի փոխանակման ծրագիր: Այն նպատակ է հետապնդում բարձրացնել եվրոպական բարձրագույն կրթության որակը և խթանել միջմշակութային երկխոսությանը՝ երրորդ երկրների հետ համագործակցության հաստատման միջոցով: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2004-2008 թվականների ընթացքում:

«Էրասմուս Մոնդուս» ծրագրի բյուջեն հասնում է 230 միլիոն եվրոի, որի 90%-ը տրամադրվում է կրթաթոշակների ձևով: Ծրագիրը բաղկացած է չորս կոնկրետ գործունեության ուղղություններից.

Գործունեության առաջին ուղղությունը հանդիսանում են *Էրասմուս Մոնդուս մագիստրոսական դասընթացները*: Այս դասընթացները այն հիմնական բաղադրատարն է, որի շուրջ կառուցված է Էրասմուս Մոնդուսը: Նվազագույնը երեք եվրոպական երկրների բարձրագույն կրթության հաստատություններից կազմված կոնսորցիումը առաջարկում է բարձրորակ մագիստրոսական ծրագրեր, որոնց շրջանակներում ընդգրկված ուսանողները պարտավոր են որոշակի ժամանակահատված ուսանել կոնսորցիումի մասնակից յուրաքանչյուր հաստատությունում: Գործունեության երկրորդ ուղղությունը *Էրասմուս Մոնդուս կրթաթոշակի տրամադրումն է*: Այս գործողության հիմնական առաքելությունն է ուժեղ արտաքին ազդակ հաղորդել *Էրասմուս Մոնդուսի* մագիստրոսական դասընթացներին: Կրթաթոշակի տրամադրման այս նախագծի նպատակն է ֆինանսական աջակցություն ցուցաբերել բարձր մասնագիտական որակավորում ունեցող անհատներին, ովքեր Եվրոպա են գալիս մասնակցելու ԷՄ մագիստրոսական դասընթացներին կամ դրանց կազմակերպական աշխատանքներին:

Որպես գործունեության երրորդ ուղղություն ծրագրում ներկայացված է *Գործընկերությունը*: Այս գործունեության շրջանակներում գործընկերություն է հաստատվում երրորդ երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Գործընկերության այս դրսևորումները ԵՄ ԲՈՒՀ ավարտած ուսանողներին և Էրասմուս Մոնդուսի մագիստրատուրայի դասընթացներին ներգրավված գիտնականներին հնարավորություն են տալիս ուսումը շարունակել երրորդ պետություններում գտնվող առավել առաջավոր և կոնկրետ մասնագիտացված ուսումնական հաստատություններում:

Գործունեության չորրորդ ուղղություն Էրասմուս Մոնդուս ծրագիրը նպատակ է հետապնդում աջակցել նաև այն նախագծերին, որոնք միտված են եվրոպական բարձրագույն կրթությունը դարձնել առավել գրավիչ և բարձրացնել դրա նկատմամբ հասարակության հետաքրքրությունը՝ եվրոպական բարձրագույն կրթության պրոֆիլի, տեսանելիության, մատչելիության բարձրացման, ինչպես նաև բարձրագույն կրթության միջազգայնացմանը ուղղված գործողությունների միջոցով:

Ծրագիրն առավել ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է նշել, որ 2004-2008թթ. ժամանակահատվածի առաջին դասընթացների շրջանակներում, «Էրասմուս Մոնդուսը» նախատեսում է աջակցել մինչև 100-ի հասնող նույնանուն մագիստրոսական դասընթացներին, որի շրջանակներում նախատեսվում է կրթաթոշակ հատկացնել մագիստրատուրայի դասընթացներին մասնակցելու համար երրորդ երկրներից եկած մոտ 6000 ավարտած ուսանողներին, և ավելի քան 4000 ավարտած ԵՄ ուսանողներին, որոնք ներգրավվել են այս դասընթացներին երրորդ երկրներում սովորելու համար: Ծրագիրը առաջարկելու է նաև դասավանդման կամ հետազոտության կրթաթոշակներ Եվրոպայում երրորդ երկրներից եկած ավելի քան 1000 գիտնականների և նույնքան դուրս մեկնող ԵՄ գիտնականների համար:

«Տեմպուսը» մեծ խթան հանդիսացավ բարձրագույն կրթության ոլորտում ԵՄ միջազգային համագործակցության համար

<http://ec.europa.eu/tempus>

«Տեմպուսը» ԵՄ առաջատար ծրագիրն է Եվրոպայի հարևանների հետ բարձրագույն կրթության ոլորտի համագործակցության հաստատման գործում: 2007թ. մարտի 5-ին, 6-ին 53 ԵՄ և «Տեմպուսի» գործընկեր երկրների պատվիրակություններ ներկա են գտնվել Բրյուսելում կայացած գիտաժողովին, որը նախագահում էր Եվրոպական հանձնաժողովը և որտեղ քննարկվեց ծրագրի հաջորդ փուլի նախագիծը: Ծրագրի նոր փուլը ընդգրկելու է 2007-2013 թթ.:

«Տեմպուսը» ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որն աջակցում է բարձրագույն կրթության արդիականացմանը և այս ոլորտում տրամադրվող ծառայությունների որակի կատարելագործմանը արևելյան Եվրոպայում, կենտրոնական Ասիայում, արևմտյան Բալկաններում և Միջերկրական ծովի շրջանում: Ծրագիրը շարունակելու իր առաքելությունը նաև 2007-2013 թթ., որը պայմանականորեն անվանվել է «Տեմպուս IV»:

Եվրոպական հանձնաժողովը առաջիկայում պատրաստվում է զարգացնել ծրագրի առանձնահատկությունները և նախագծերը՝ «Տեմպուս IV» սկզբնական ծրագրի առաջարկությունները 2007թ. երկրորդ կեսին գործարկելու նպատակով:

Տեմպուսը՝ միակ ֆինանսավորվող ծրագիրն է, որ առնչվում է բարձրագույն կրթության բոլոր ասպեկտներին: Այն աջակցում է համալսարանների բարեփոխմանը գործընկեր երկրներում, ներառյալ Բոլոնիայի գործընթացի արդյունքում նախատեսված ուսումնական ծրագրերի փոփոխությունները: Այս փոփոխությունների հաջողությունը արտացոլվել է վերջին ուսումնասիրությունների արդյունքում, ինչը ցույց է տալիս, որ «Տեմպուսը» դիտարկվում է որպես Եվրոպական գիտական աշխարհի կարևորագույն հայտնություն: Դա մեծ օգնություն է Եվրոպական համալսարանների միջև համագործակցության հաստատման համար: Անցած 17 տարիների ընթացքում «Տեմպուսը» ֆինանսավորել է 6500 ծրագրային առաջարկություններ, որոնց իրականացման ընթացքում ներգրավված էին ԵՄ և գործընկեր պետությունների ավելի քան 2000 համալսարաններ:

Եվրոպական համալսարանների և հարևան երկրներում դրանց գործընկերների միջև համագործակցությանն աջակցելու քաղաքականությունը «Տեմպուսին» հնարավորություն չեն ընձեռում իրականացնել միջազգային զարգացման այլ նախաձեռնություն: 2007-2013 թթ. համար «Տեմպուսի» ակնկալվող տարեկան բյուջեն կլինի մոտ 50 միլիոն եվրո:

Եվրոպական Երիտասարդական Ֆորում

Ի՞նչ է Եվրոպական Երիտասարդական ֆորումը

www.youthforum.org/en/about_us.htm

Ստեղծված անկախ երիտասարդական կազմակերպությունների կողմից՝ Եվրոպական երիտասարդական ֆորումը (ԵԵՖ) կազմված է ավելի քան 90 Ազգային երիտասարդական խորհուրդներից և միջազգային ոչ կառավարական երիտասարդական կազմակերպություններից, որոնք հանդես են գալիս որպես երիտասարդական կազմակերպությունների դաշինքներ: Այն համախմբել է տասնյակ միլիոնավոր երիտասարդների ամբողջ Եվրոպայից և ստեղծվել է վերջիններիս ընդհանուր շահերի Միության մակարդակում

ներկայացնելու և պաշտպանելու համար: ԵԵՖ-ի և նրա անդամ կազմակերպությունների գործունեության հիմնական սկզբունքներն են՝ ներկայացուցչականությունը, ներքին ժողովրդավարությունը, անկախությունը, թափանցիկությունը և իրականացվող ծրագրերի մեջ ներգրավվածությունը:

Եվրոպական երիտասարդական ֆորումը նպատակ ունի խթանել երիտասարդների ակտիվ մասնակցությունը Եվրոպայի կերտմանը, ինչպես ներկայիս աշխարհի երիտասարդների՝ որպես Եվրոպայի քաղաքացիների կենսապայմանների բարելավմանը:

Եվրոպական Միությունը և ԵԵՖ

ԵՄ-ն հանդիսանում է Եվրոպական Երիտասարդական ֆորումի հիմնական ինստիտուցիոնալ գործընկերը: Վերջին տասնամյակի զարգացումները՝ հատկապես 2001թ. երիտասարդությանը վերաբերող ԵՄ-ի Սպիտակ Գրքի հրապարակումը, որին հետևեց երիտասարդության ոլորտում «Համակարգման Ազատ Մեթոդի» ներկայացումը և Լիսաբոնյան Ռ-ազմավարության շրջանականներում 2005թ. Եվրոպական Երիտասարդական Ռ-աշնագրի ընդունումը, առանձնակի կարևորություն և նշանակություն հաղորդեցին երիտասարդության ոլորտում ԵՄ-ի դերակատարմանը:

ԵԵՖ-ն հանդիսանում է ԵՄ-ի տարբեր ինստիտուտների և մարմինների գործընկերը և հիմնարար ֆինանսավորում է ստանում իր գործնեության համար ԵՄ-ի ընդհանուր բյուջեի միջոցների հաշվին: Ընդգծենք, որ եվրոպական մակարդակում ԵԵՖ-ն հանդիսանում է Եվրոպական Հանձնաժողովի հիմնական գործընկերը: Այնուամենայնիվ, ԵԵՖ-ն նաև ինտեսիվորեն համագործակցում է ԵՄ-ի այլ ինստիտուտների և մարմինների հետ: Նախ և առաջ ԵԵՖ-ն ակտիվորեն զարգացնում է իր քաղաքականությունը Եվրոպական Խորհրդարանի և ԵՄ-ի Խորհրդի հետ համագործակցության ուղղությամբ, ինչպես նաև կապեր է պահպանում Եվրոպական Տնտեսական և Սոցիալական Կոմիտեի ու Տարածքների կոմիտեի հետ: Երիտասարդական քաղաքականության բազմաբնույթ մոտեցման ոգով՝ ԵԵՖ-ն հետևում է եվրոպական ինստիտուտների աշխատանքներին՝ երիտասարդությանը վերաբերող բոլոր քաղաքական ոլորտներում: Սա նշանակում է, որ երիտասարդությանն ուղղված հատուկ քաղաքականությունից և ծրագրերից զատ, ԵԵՖ-ն օժանդակում է նախաձեռնություններին մնացած այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են զբաղվածությունը, հավասարությունը, սոցիալական հարաբերությունները, կրթությունը, կայուն զարգացումը և այլն:

ԵՄ-ի Հարաբերությունների հարցերով հանձնաժողովը ԵԵՖ-ի այն պատասխանատու մարմինն է, որը հետևում է ԵՄ-ի մակարդակում կարևոր զարգացումներին և էական դեր է կատարում ԵՄ ինստիտուտներում ԵԵՖ-ի քաղաքականության և դիրքորոշումների խրախուսման ուղղությամբ:

3. ԱՐՏԱԶԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

Այն գաղափարը, որ Եվրոպական Միությունը պետք է միասնաբար արձագանքի աշխարհի մարտահրավերներին, այնքան հին է, որքան եվրոպական ինտեգրացիայի գործընթացը: Միությունը տարիների ընթացքում ավելի քիչ առաջընթաց է արձանագրել ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության, քան միասնական շուկայի կայացման և միասնական դրամական միավորի ներմուծման գործում: Աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոնք հետևեցին կոմունիզմի փլուզմանը և տարածաշրջանային ճգնաժամը Բալկաններում և դրանից դուրս, հանգեցրին նրան, որ ԵՄ անդամ-պետությունների ղեկավարները կրկնապատկեցին իրենց ջանքերը առաջ եկած մարտահրավերների վերաբերյալ միասնական դիրքորոշման մշակման և իրագործման ուղղությամբ:



Պատմական առաջին լուրջ քայլը եղավ 1954թ-ին կատարված փորձը ստեղծել Եվրոպական պաշտպանական ընկերակցություն, որը ձախողվեց Ֆրանսիայի խորհրդարանում վավերացման փուլում: Սրան հետևեց 1970 թ-ին սկիզբ առած եվրոպական քաղաքական համագործակցությունը, որի շրջանակներում ԵՄ անդամ պետությունները փորձ արեցին համակարգել իրենց դիրքորոշումները արտաքին քաղաքականության առօրյա խնդիրների շուրջ:

Այս գործընթացի շրջանակներում աշխարհաքաղաքական մի քանի իրադարձությունների առնչությամբ ԵՄ անդամ-պետությունները հանդես եկան միասնական հայտարարությամբ (բայց ոչ գործողությամբ), որը բացառում էր ագրեսիան և ահաբեկչությունն աշխարհում՝ աջակցելով ՄԱԿ-ի և տարածաշրջանային այլ կազմակերպությունների խաղաղապահ և այլ նախաձեռնություններին և առաքելություններին:

Չնայած որ պետական ինքնիշխանության համար զգայուն հիմնահարցերի կամ բոլոր այն դեպքերում, երբ առանձին ԵՄ պետություններ դեռևս պահպանում են իրենց արտաքին-քաղաքական շահերը, Միությունը ձգտում է հասնել կոնկրետ հիմնախնդրի վերաբերյալ ընդհանուր դիրքորոշման, որի դեպքում բացառվում է առանին անդամ-պետությունների կողմից ընդհանուր դիրքորոշմանն հակասող տեսակետների արտահայտումը:

Վերջին 15 տարիների ընթացքում, Միությունը նորացրել է իր ջանքերը միջազգային ասպարեզում քաղաքական և անվտանգության ոլորտում իր դերակատարումը բարձրացնելու ուղղությամբ՝ այն ավելի շատ համադրելով տնտեսական և առևտրային քաղաքականությունների հետ: Տարածաշրջանային և տեղական բնույթի բախումներն ու ընդհարումները, որոնք ի հայտ եկան 1989թ-ին Բեռլինի Պատի փլուզումից հետո և վերջերս միջազգային ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտությունը ապացուցեցին

ԵՄ առաջնորդներին, որ նրանք պետք է ձեռնարկեն թե դիվանագիտական, և թե առարկայական միջամտության ֆորմալ և արդյունավետ միջոցներ:

Խնդիրներից մեկն էր որոշել, թե անդամ-պետությունների արտաքին քաղաքական իրավասության որ մասը կարող էր փոխանցվել Եվրոպական Միության իրավասություն, և հատկապես լիազորությունների որ մասը պետք է պահպանեին անդամ-պետությունները որպես ազգային ինքնիշխանության կարևորագույն բաղադրամաս: Ի վերջո, արտաքին-քաղաքական իրավասության իրականացման հիմնական լիազորությունները մնացին անդամ պետությունների իրավասության շրջանակներում, չնայած այն հանգամանքին, որ Եվրոպական Հանձնաժողովը, և որոշ դեպքերում՝ Եվրոպական Խորհրդարանը, կոնկրետ դեպքերում և իրավիճակներում իրավասու էին միջամտել անդամ-պետությունների իրավասություն՝ Միության միասնական դիրքորոշում մշակելու և ներկայացնելու նպատակով: Այնուամենայնիվ, Միության հիմնադիր պայմանագիրը այդ ընդհանուր դիրքորոշման ընդունման համար սահմանում է միաձայնություն, որը պրակտիկ իրականացման ընթացքում զգալի դժվարություններ է հարուցում ԵՄ արդեն 27 անդամ պետությունների պարագայում:

ԱՌԱՎԵԼ ՎՃՌՈՐՈՇ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Միության հիմնադիր պայմանագրով նախատեսված ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությանը դիվանագիտական աստառ և թափանցիկություն հաղորդելու նպատակով ստեղծվել է արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն հանձնակատարի պաշտոն, որի առջև դրված խնդիրների առավելագույն արդյունավետությամբ իրականացնելու համար Պայմանագիրը նախատեսեց բավականին ծավալուն կառուցվածքային ստորաբաժանում, որը ներառում է քաղաքականության միավոր՝ ճգնաժամային իրավիճակներում գնահատականներն ու վաղ նախազգուշացումները ապահովելու համար, անվտանգության և քաղաքականության կոմիտեն և ռազմական կոմիտեն: ԵՄ Սահմանադրություն հիմնադիրող պայմանագրի նախագիծը այս ոլորտում գնաց ավելի հեռու՝ նախատեսելով Եվրոպական Միության արտաքին գործերի նախարարի պաշտոն: Նախագիծը ստորագրվել է ԵՄ բոլոր անդամ-պետությունների ղեկավարների կողմից և ներկայումս գտնվում է վավերացման փուլում: Եվրոպական Միությունը հզոր դիրքեր է պահպանում ցամաքում և տեղակայել է հատուկ ներկայացուցչություններ աշխարհի մի քանի թեժ կետերում՝ Մեծ Լճեր (Աֆրիկա), Միջին Արևելք, Բալկաններ և Աֆղանստան:

ՎՍՏԱՀԵԼԻ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Որպես ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության մի մաս՝ Եվրոպական Միությունը՝ նպատակ հետապնդելով ապագայում հիմնադիրել ստեղծել ընդհանուր պաշտպանության կառույց, ներկայումս իրականացնում է նաև Եվրոպական

անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականություն (ESDP): 2003թ. դեկտեմբերին ԵՄ առաջնորդները հաստատել են եվրոպական անվտանգության ռազմավարությունը և համաձայնել, որ իրենց հիմնական առաքելությունը և գործողությունների առաջնային ոլորտներն են՝ ահաբեկչության դեմ պայքարը, Միջին Արևելքի ռազմավարությունը, համընդհանուր քաղաքականությունը Բոսնիա-Հերցեգովինայում:

Վստահելի միջամտության հնարավորություն ապահովելու համար ԵՄ-ն նախատեսել է մի շարք ծրագրեր, որոնք կարող էին իրականացվել ռազմականացված ուժերի կողմից, որը ենթադրում է ստեղծել արագ արձագանքման մարդասիրական և փրկարարական ջոկատներ և խաղաղապահ ուժեր, որոնց հիմնական առաքելությունը պետք է լինի ճգնաժամային իրավիճակների կառավարումը, տեղական ու տարաքային բնույթի ընհարումների և հակամարտությունների հաղթահարումն ու խաղաղության պահպանումը: Այս նպատակները իրագործելու համար, Միությունն արդեն ստեղծել է արագ արձագանքման ուժեր, որոնց ռազմական հնարավորությունները աստիճանաբար կհամալրվեն տարիների ընթացքում:

Միությունը՝ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության շրջանակներում անդամ-պետությունները Միության շրջանակներում համաձայնություն են ձեռք բերել տրամադրել մինչև 5000 ոստիկանության աշխատակիցներ՝ ճգնաժամային իրավիճակների կառավարման համար, ընդ որում դրանցից 1000-ը կարող են անցնել ծառայության այդ մասին համապատասխան որոշման ընդունումից հետո երեսուն օրվա ընթացքում:

ԱՌԱՋԻՆ ԵԱՊԶ (ESDP) ՋՈՎԱՏՆԵՐԸ

Առաջին ԵԱՊԶ (ESDP) ջոկատները տեղակայվել են նախկին Հարավսլավիայի տարածքում՝ արձանագրված խռովությունների վաղ շրջանում: Առաջինը սկսվել է 2003թ-ի հունվարի 1-ին, երբ 500 աշխատակիցներից բաղկացած եվրոպական ոստիկանական ջոկատը ՄԱԿ-ի Միջազգային ոստիկանության ուժերից (IPTF) փախստորվեց Բոսնիա-Հերցեգովինա: Երեք տարի ժամկետով ստեղծված ջոկատի գործողության տևողությունը երկարացվեց մինչև 2007թ-ի վերջը: Այն ուշադրությունը կենտրոնացնում է տեղական ոստիկանության աշխատակիցների վերապատրաստման վրա՝ ստեղծելով եվրոպական չափանիշներին և փորձառությանը համապատասխան կայուն ոստիկանական ծառայություններ: Երկրորդ գործողությունը հետևեց ավելի ուշ՝ 2003թ-ին, երբ Հյուսիս-Ատլանտյան դաշինքի փոքրաթիվ ուժերը Մակեդոնիայից փոխարինվեցին սկզբում ԵՄ-ի ռազմական ուժերով, այնուհետև, ԵՄ ոստիկանության 200-անոց ջոկատների կողմից, որոնք շարունակում են իրենց ծառայությունը այդ տարածաշրջանում: Երրորդ խոշարածավալ գործողությունը սկսվեց 2004թ-ի դեկտեմբերին, երբ ԵՄ ռազմական ուժերը (EUFOR) փոխարինեցին նախկինում տեղակայված ՆԱՏՕ-ի Անվտանգության ուժերին (SFOR) Բոսնիա-Հերցեգովինայում: Անվտանգության ուժերը տարածաշրջանի (SFOR)

իրականացնում են իրենց առաքելությունը 1995թ-ի ռազմական գործողությունների վերջերից: Եվրոպական միության ուժերը ունեն ընդհանուր թվով 8000 զորամիավորումներ:

ԱՅՍՏԵՂԻՑ ԴԵՊԻ ՈՒՐ

Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (CFSP) և Եվրոպական անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականության (ESDP) հետ մեկտեղ, Միությունը ստեղծում է քաղաքական հարթություն՝ մեծացնելու համար իր միջազգային դերը՝ որպես գերիշխող առևտրային և տնտեսական ուժ: Այս ռազմավարական և բավականին ամբիցիոզ ու հեռահար նպատակի իրականացման համար Միությանը դեռևս անհրաժեշտ է հաղթահարել բազմաթիվ քաղաքական և տնտեսական խոչընդոտներն ու անցնել երկար ճանապարհ: Չնայած Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության մեջ հաջողության հասնելու նրանց բարոյական պարտականությանն ու կենսական անհրաժեշտությանը, անդամ-պետությունների կառավարությունները՝ հանուն Եվրոպական միանության, երբեմն դժվարանում են փոխության ենթարկել սեփական ազգային արտաքին-քաղաքական դիրքորոշումը կոնկրետ պետության, տարածաշրջանի կամ աշխարհաքաղաքական իրադարձության վերաբերյալ:

Չնայած այն հանգամանքին, որ Միության հիմնադիր պայմանագիրը՝ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության որոշումների ընդունման համար քվեարկության սկզբունքն ամրագրելիս ցուցաբերել է ճկունություն՝ թույլատրելով առանձին կառավարություններին մնալ ձեռնպահ, որի արդյունքում մնացած անդամ-պետությունները հնարավորություն են ստացել ընդունել քաղաքական ընդհանուր դիրքորոշումներ ձայների մեծամասնությամբ: Այս դեպքում ձեռնպահ մնացած պետությունները պարտավորվում են հարգել մեծամասության ընդունած դիրքորոշումը և ձեռնպահ մնալ դիրքորոշմանը հակասող կամ խոչընդոտող ցանկացած բնույթի գործողություններից: Սակայն այս ձեռքբերումների հետ մեկտեղ դեռևս պահպանվել է միաձայնության ընթացակարգը ռազմական կամ պաշտպանական միջամտությունների վերաբերյալ որոշումներ ընդունման հարցում:

4. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

http://ec.europa.eu/health/ph_programme/programme_en.htm

2002թ. սեպտեմբերի 23-ին Եվրոպական Միության Խորհուրդը և Խորհրդարանը՝ Եվրոպական Հանճնաժողովի առաջարկությամբ, հաստատել են հանրային առողջապահության ոլորտում Ընկերակցության գործողության նոր ծրագիր: Այս ծրագիրը նախատեսվում է իրագործել 6 տարի ժամկետով (2003թ-ի հունվարի 1-ից մինչև 2008թ-ի դեկտեմբերի 31-ը) և առավելապես հիմնված է 3 ընդհանուր նպատակների վրա. հանրային տեղեկատվություն, արագ արձագանքում առողջության սպառնալիքներին և առողջության բարելավում առողջապահական խնդիրների լուծման միջոցով: Միջոցառումները, ինչպիսիք են ցանցերի ստեղծումը, համակարգված արձագանքները, ձեռք բերված փորձի փոխանցումը, վերապատրաստումը և տեղեկատվության ու գիտելիքի տարածումը ամբողջովին կրում են փոխկապակցված ու փոխլրացնող բնույթ և նպատակ են հետապնդում նաև մշակել միասնական մոտեցում առողջության պահպանման և կատարելագործման ուղղությամբ: Որպես այս միասնական մոտեցման մաս՝ մասնավորապես ուշադրություն է դարձվում Ընկերակցության այլ ինստիտուտների և մարմինների հետ կապերի հաստատման ու համատեղ գործողությունների իրականացման անհրաժեշտությանը: Ընկերակցության կողմից իրականացվող այլ քաղաքականությունների (ինչպիսիք են հետազոտությունը, ներքին շուկան, գյուղատնտեսությունը կամ շրջակա միջավայրը) և գործունեությունների ծրագրերից բխող առողջության վրա ազդեցության գնահատականը կիրառվում է որպես գործիք՝ երաշխավորելու համար այդ ծրագրերի համապատասխանությունը Ընկերակցության առողջապահության ռազմավարությանը:

Ընկերակցության՝ 2003-2008թթ. հանրային առողջապահության ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել և կիրառել հաստատուն առողջապահության դիտարկման (մոնիտորինգի) համակարգ: Մոնիտորինգի համակարգը կոչված է համեմատելի տեղեկատվություն ներկայացնել առողջապահության և առողջությանն առընչվող հասարակության վարքագծի վերաբերյալ, հիվանդությունների և Միության անդամ-պետությունների առողջապահության համակարգերի մասին: Համակարգը հիմնված կլինի Եվրոպական Միությունում լայնորեն տարածված և ընդհանուր համաձայնեցված ցուցանիշների վրա՝ դրանց սահմանման, դրանց մասին տեղեկատվության հավաքման և կիրառման համար:

Ընկերակցության՝ հանրային առողջապահության ծրագիրը, որը վերաբերում է “Առողջության սպառնալիքներին”, փորձում է լուծել հետևյալ դրույթները: Այն հատկապես նպատակ ունի նպաստել վարակիչ հիվանդությունները վերահսկող ցանցերի և վաղ նախազգուշացման ու արագ արձագանքման համակարգերի բազմազանության զարգացմանը (Ռոռշում՝ 2119/ 98/ EC), ինչպես նաև լուծել հակամանրէաբանական դիմադրության և կենսաահաբեկչության հիմնախնդիրները և զարգացնել արձագանքման ու կանխարգելման ռազմավարություն վարակիչ հիվանդությունների (օրինակ, գրիպին նախապատրաստվելն ու պաշտպանությունը դիտավորյալ համաճարակներից) և ոչ վարակիչ հիվանդությունների սպառնալիքների համար: Այն նույնպես դրույթներ է սահմանում մարդու ծագման մատերիայի պաշտպանության և որակի վերաբերյալ (օրինակ, արյան, հյուսվածքների, բջիջների և օրգանների), որոնք նշված են ԵՄ

հիմնադիր պայմանագրի 152-րդ հոդվածում՝ կանխելու համար այս թերապևտիկ նյութերի կողմից պաթոլոգիաների փոխանցումը:

http://ec.europa.eu/health/ph_determinants/healthdeterminants_en.htm

Առողջապահության գերակա նպատակների մեծամասնության լուծումը բավականին մեծ ներուժ է պարունակում հիվանդությունների բեռը թեթևացնելու և բնակչության առողջությունը բարելավելու համար: Առողջապահության հիմնախնդրի վրա որոշակի ազդեցություն գործող գործոններն են.

ա/ անհատական վարքագիծը և ապրելակերպը;

բ/ համայնքների մեջ առկա ազդեցություններ, որոնք կարող են պահպանել կամ վնասել առողջությունը;

գ/ ապրելու կամ աշխատելու պայմաններն ու առողջապահական ծառայությունների մատչելիությունը;

դ/ ընդհանուր սոցիալ-տնտեսական, մշակութային և շրջակա միջավայրի պայմանները:

Ապրելակերպ. Անհատական ապրելակերպը կախված է առողջապահական այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ մշակութային, աշխատանքային, կրթական, եկամտի և սոցիալական ու ներհամայնքային կապերը: Ենթադրվում է, որ այս գործոնների արդյունավետ և կշռադատված համադրման ու գործարկման արդյունքում զգալի փոփոխության կենթարկվի անհատի ապրելակերպը:

Առողջապահության սոցիալ-տնտեսական գործոնները. առողջական անհավասարություններ. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացության մակարդակը կարևոր գործոն է առողջապահության վերահսկման ու պահպանման համար: Առավել չքավոր բնակչության թվում ավելի մեծ թիվ են կազմում չկրթված մարդիկ, և հետևաբար մեծ թվով մարդիկ՝ ունենալով բավականին ցածր կարգավիճակով աշխատանք, հայտվում են ավելի վատ առողջական վիճակում սպառնալիքի տակ: Առողջության բարելավումը, սոցիալական անհավասարության վերացումը և առողջապահական միջոցների հասանելիության ապահովումը հանդիսանում են յուրաքանչյուր հասարակության և պետության գերակա խնդիր, սակայն պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ հասարակության անդամների առողջությունը նաև կարևոր պահանջ է տնտեսության հետագա զարգացման համար:

Շրջակա միջավայր. Ֆիզիկական միջավայրը մի էկոհամակարգ է, որի հետ մարդիկ գտնվում են հաստատուն հարաբերությունների մեջ և որի հետ նրանց լավ լինելու հաստատունությունը աննկարագրելիորեն խճճված է: Խնդիրը կայանում է նրանում, որ Միության անդամ-պետություններում տնտեսության որոշակի ճյուղերի և արդյունաբերական հիմնարկների զարգացման հետ զուգահեռ աղետալի արագությամբ ավելանում է օդի աղտոտվածությունը, իսկ տնտեսության զարգացումը ապահովելու

համար հատվում են հազարավոր հեկտարների հասնող անտառային մակերևույթներ: Մեծ վտանգ է իր մեջ նաև պարունակում օգոնային շերտի բարակումը, որի արդյունքում երկիր մոլորակ են ներթափանցում ուլտրա-մանուշակագույն ճառագայթները, որոնք ուղղակի և անմիջականորեն ազդում են մոլորակի բնակչության ինքնազգացողության և առողջության վրա: Միությունը բազմիցս անդրադարձել է այս կենսական կարևորություն ներկայացնող հիմնախնդրին և այն դիտարկում է որպես առաջնահերթ նշակություն ու կարևորություն ներկայացնող մարտահրավեր:

Աշխատանքի ժամանակ դժբախտ պատահարների 25% կրճատումը 2012 թվականի դրությամբ-Եվրոպական Միության նոր մարտավարությունը

http://ec.europa.eu/employment_social/emplweb/news/news_en.cfm?id=209

Բրյուսել 21-02-2007: Համաձայն 2007 թվականի փետրվարին Հանձնաժողովի կողմից ընդունված աշխատանքի վայրում առողջության և անվտանգության նոր հնգամյա ռազմավարության, մասնագիտական հիվանդություններն և դժբախտ պատահարները պետք է կրճատվեն մեկ քառորդով ամբողջ Եվրոպական Միությունում: Դա պետք է հանդես գա որպես 2002-2004թթ. ընթացքում մահացու դժբախտ



պատահարների 17% կրճատման և աշխատանքից երեք կամ ավելի օր բացակայության պատճառ հանդիսացող դժբախտ պատահարների 20% նվազման շարունակություն:

Սակայն առաջընթացը մնում է անհավասար տարբեր երկրներում, ոլորտներում, ընկերություններում և աշխատողների կատեգորիաներում: Աշխատանքային կյանքում փոփոխությունները հանգեցնում են նոր մասնագիտական ռիսկերի, մինչդեռ մի շարք աշխատանքների հետևանքով առաջացած հիվանդությունների թվերն աճում են:

Զբաղվածության, հավասար հնարավորությունների և սոցիալական հարցերով հանձնակատար Վլադիմիր Սպիդլան ասում է. «Աշխատանքի ժամանակ մասնագիտական հիվանդությունները և դժբախտ պատահարները Եվրոպայում ծանր բեռ են հանդիսանում ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների համար: Յուրաքանչյուր տարի աշխատանքի ժամանակ տեղի են ունենում 4 միլիոն դժբախտ պատահարներ, որոնք Եվրոպական տնտեսության համար հսկայական տնտեսական կորուստներ են ներկայացնում: Այդ կորուստների զգալի մասը բաժին է ընկնում սոցիալական անվտանգության համակարգին և պետական միջոցներին: Աշխատողների առողջության և անվտանգության բարելավումը բանալի է Եվրոպական Միության զարգացման համար: Նպաստելով աշխատավայրում արտադրողականության և որակի բարձրացմանը՝ մենք կնպաստենք Եվրոպայի տնտեսական աճին և մրցունակության բարելավմանը»:

Չնայած վերջին հինգ տարիների ընթացքում արձանագրված նշանակալից առաջընթացին, դեռևս առկա է բարեփոխման կարիք ունեցող բավականին մեծգործառույթներ: Աշխատանքի ժամանակ դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների արդյունքում ծառակողների կողմից կրած կորուստները հավասարապես չեն բաշխվում հանրային ծառայողների և մասնավոր բիզնեսում ներգրավված Միության քաղաքացիների միջև: Աշխատանքից բացակայության պատճառով եկամուտների կորուստները Եվրոպացի աշխատողների համար կազմում են տարեկան մոտ մեկ միլիարդ Եվրո: Գործատուները բախվում են հիվանդությունների հետ կապված վճարումներ կատարելու, բացակա աշխատողների փոխարինման անհրաժեշտության և արտադրողականության կորստի հետ, որոնցից շատերը չեն ծածկվում ապահովագրական ծառայությունների կողմից:

Փոքր և միջին ձեռնարկություններին բաժին են ընկնում բոլոր մասնագիտական վնասվածքների 82% և բոլոր մահացու դժբախտ պատահարների 90%: Շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի և առողջապահության ոլորտներում դժբախտ պատահարների միջին ռիսկը աշխատանքի ժամանակ ավելի բարձր է, քանի որ երիտասարդ աշխատողները, գաղթականները, տարեց աշխատողները և վտանգավոր պայմաններում բոլոր աշխատողները ավելի շատ են ենթակա այդպիսի ռիսկերի:

Զգալիորեն աճել են այնպիսի հատուկ հիվանդությունները, ինչպիսիք են մկանառսկրային հիվանդությունները, ողնաշարի ցավը, հոդային վնասվածքները և կրկնվող դեֆորմացնող հիվանդությունները, այդ թվում հոգեկան լարվածության հետևանքով առաջացող հիվանդությունները, աճում են:

2007-2012թթ. համար նոր ռազմավարությունը նպատակ ունի հասնել ԵՄ-ում ծառակողական պարտականությունները կատարելու ընթացքում հանդիպող դժբախտ պատահարների և հիվանդությունների համընդհանուր 25% նվազեցմանը: Այն սահմանում է Եվրոպական և ազգային մակարդակներում մի շարք գործողությունների շրջանակ՝ հետևյալ հիմնական ոլորտներում.

- գործող օրենսդրության կատարելագործում և հնարավորինս պարզեցում, ինչպես նաև աջակցություն պրակտիկայում դրա իրագործմանը այնպիսի ոչ պարտադիր մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են լավագույն փորձի փոխանակումը, իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու իրականացումը, ավելի որակյալ կրթության և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը;
- յուրաքանչյուր անդամ-պետության առանձնահատկություններին համապատասխան ազգային ռազմավարությունների մշակում և իրականացում;
- ազգային և Եվրոպական այլ քաղաքականության ոլորտներում (կրթություն, հանրային առողջապահություն, հետազոտություն) աշխատանքի ժամանակ առողջության պահպանման և անվտանգությանն առնչվող հարցերի ներառում և համատեղ գործունեության իրականացում;
- առավել հաճախ կազմակերպվող և իրականացվող հետազոտությունների, գիտելիքի փոխանակման և արդյունքների պրակտիկ կիրառման միջոցով պոտենցիալ նոր ռիսկերի ճանաչում և գնահատում:

ԵՄ Էներգետիկա. Ապահով և կանաչ ապագայի որոնումներում

http://www.europarl.europa.eu/news/public/story_page/~



ԵՄ-ն իր ամբողջ էլեկտրաէներգիայի 50%-ը ներմուծում է դրսից էներգետիկ կարիքները հոգալու համար: Էլեկտրաէներգիայի սպառման մակարդակի նման աճի պայմաններում հարց է ծագում, թե ԵՄ-ն ապագայում ինչպե՞ս պետք է բավարարի օրեցօր աճող էներգիայի պահանջարկը: Ի նկատի ունենալով հիմնախնդրի կենսական կարևորությունը և ռազմավարական նշանակությունը, մինչև ԵՄ առաջնորդների կողմից նշված հիմնախնդրին անդրադառնալը այս հարցը քննարկվել է խորհրդարանական լսումների ժամանակ: Միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը ակնհայտ է. փորձագետները կանխատեսել են, որ արդյունահանվող վառելանյութերի պահանջարկը և ածխաթթու գազի արտանետումների ծավալը 25 տարում կաճեն 50%-ով՝ վտանգի ենթարկելով երկիր մոլորակի կլիմայի կայունությունը: Հարցի քննարկմանը ներկա պաշտոնյաները համաձայնել են, որ կլիմայական փոփոխությունը և էներգիայի անվտանգությունը միևնույն մետաղադրամի երկու կողմերն են: Մասնավորապես այս հիմնախնդիրը բուռն քննարկման նյութ դարձավ 2006թ. նոյեմբերի 24-ին Հելսինկիում տեղի ունեցած Եվրոպական Միություն-Ռուսաստանի Դաշնություն գազաթափոցովի աշխատանքների ընթացքում:

Էներգետիկան որպես արտաքին քաղաքականության «գործիք»

Ներկայումս Եվրոպայի նավթը և գազը հիմնականում ներմուծվում են Ռուսաստանից և Սերձավոր Արևելքից: Իրաքում շարունակվող բռնությունները, լայն տարածությունը և Ռուսաստանի վեճերը իր հարևան Ուկրաինայի, Բելառուսի և Վրաստանի հետ մեծ հարցականի տակ են դրել մատակարարման կայունությունը:

Չինաստանի և Հնդկաստանի տնտեսական աճը նույնպես ակնհայտորեն մեծացրել են աշխարհում էներգիայի պահանջը և անհրաժեշտությունը և դրա հետ միասին՝ աշխարհաքաղաքական ծախսերը: Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահը նշել է, որ էներգիան օգտագործվում է որպես արտաքին քաղաքականության «գործիք»:

Արդյո՞ք ԵՄ-ը խոցելի է

2007 թվականի մարտին տեղի ունեցած Եվրոպայի Էներգետիկ գազաթափոցովին նախորդող Եվրոպական խորհրդարանում կազմակերպված լսումների արդյունքում ձեռք բերված փոխհամաձայնությունը եղավ այն, որ 27 անդամ պետությունները պետք է

հանդես գան միասնաբար և զարգացնեն ընդհանուր էներգետիկ քաղաքականությունը: Անդրադառնալով դիտարկվող քաղաքականությանը՝ Միջազգային էներգետիկ ծառայության տնօրեն Նոէ վան Հուլսթըն ասաց, որ «Մի ձայնով խոսելը լավ է, բայց այժմ դա իրականություն չէ»: Նա ԵՄ-ին կոչ արեց «ունենալ միասնական առաքելություն»: Խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահը լրացրեց նրան՝ ասելով, որ «ազգային առաջարկները բավական չեն»: Կազմակերպված լսումների ընթացքում Եվրոպական հանձնաժողովը զգուշացրել է աշխարհի տարբեր մասերում էներգիայից օգտվելու հնարավորությունների սղության մասին: Դա թե էներգետիկ սովի, թե էներգիայի բացակայության հետևանք է:

Ի՞նչ է պետք անել

Առաջին քայլը կարող է լինել տան ներսում եղած սարքավորումների «անջատումը»: Տանը կրճատելով այդքան շատ էներգիայի վատնումը կարող է լինել էներգիա խնայելու ուղիներից մեկը:

Ամբողջ տնտեսության կրտվածքով, ԵՄ հանձնաժողովի ուսումնասիրությունները ամփոփում են, որ ԵՄ օգտագործում է 20%-ով ավելի շատ էներգիա, քան նրան անհրաժեշտ է տնտեսության գործող աճի մակարդակը պահպանելու համար: Կատարված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Միության էներգետիկ համակարգը ակնհայտորեն զգում է բարելավման կարիք:

Հարաբերություններ Ռուսաստանի հետ

Հաշվի առնելով Ռուսաստանից այդքան մեծ ծավալի գազի ներմուծումը՝ ԵՄ հարաբերությունները Մոսկվայի հետ ունեն վճռորոշ նշանակություն: Որոշ պետություններ, ինչպիսիք են Սլովակիան, ֆինլանդիան, Բուլղարիան և Լիտվան մեծապես կախված են ռուսական գազի ներմուծումից: Մոսկվայի էներգետիկ քաղաքականության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Միլովը՝ վերը նշված խորհրդարանական լսումների ընթացքում, հիշեցրել է Վլադիմիր Պուտինի այն հայտարարությունը, որ ՌԴ կառավարությունը իր էներգետիկ հսկա «Գազպրոմին» համարում է արտաքին հարաբերությունների ոլորտում իր հիմնական զենքը:

Իսկ Վաշինգտոնի Հուդզոնի ինստիտուտի Եվրասիայի քաղաքականության կենտրոնի ավագ գիտաշխատող Ջեյնո Բառանը միևնույն լսումների ժամանակ նշել է, որ Միության էներգետիկ անվտանգությունը երաշխավորելու համար Միությունը պետք է ձեռնարկի բոտլոր հնարավոր միջոցները Կասպից ծովի, Միջերկրական ծովի և Կենտրոնական Ասիայի էներգետիկ պոտենցիալը Միության շահերին ծառայեցնելու համար:

«Կլիմայական բախման» զգուշացումը


Բեռլինի շրջակա միջավայրի խոշոր գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող Ջեննիֆեր Մորգանը զգուշացնում է կլիմայական «բախման» հնարավորության մասին և նշել, որ վերջին ժամանակներս արձանագրված տնտեսական զարգացման հետևանքով շրջակա միջավայրի հետ կապված ստրեսների և միգրացիայի սպառնալիքները դարձել են առավել իրական: Եվրոպային առնչվող ցանկացած հարցի կարևորության մասին խոսելով նա զգուշացնում է, որ «կլիմայի փոփոխությունը իր բացասական ազդեցությունը կթողնի ԵՄ կողմից իրականացվող ցանկացած քաղաքականության վրա, դարձնելով դրանք թերի և անկատար, որի արդյունքում Միության արտաքին քաղաքականությունը կընթանա ոչ ճիշտ ճանապարհով»:

6. ՀԵՏԱԲՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ՝ ՄԱՐՏԻ 8, 2007 Թ.

<http://ec.europa.eu/eurostat>

ԵՄ-ում կանանց և տղամարդկանց կարգավիճակի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն



2007թ.-ի մարտի 8-ին՝ Կանանց միջազգային տոնի առթիվ Եվրոստատը՝ Եվրոպական Ընկերակցությունների վիճակագրական գրասենյակը, ԵՄ-ում կանանց վերաբերյալ հրապարակել է վիճակագրական տվյալներ՝ ժողովրդագրական, կրթական, համակարգչային ունակությունների, զբաղվածության և գործազրկության ոլորտներում՝ համեմատելով դրանք տղամարդկանց հետ ունեցած իրենց նմանությունների ու տարբերությունների հետ:

2050թ. ԵՄ բոլոր անդամ պետություններում կանանց կյանքի տևողությունը լինելու է ավելի քան 80 տարի:

2005թ-ին ԵՄ բոլոր անդամ պետություններում կանայք ունեին կյանքի ավելի երկար տևողություն քան տղամարդիկ, և դա կպահպանվի նաև մինչ 2050թ. ընկած ժամանակահատվածը: 2005թ-ին ԵՄ-ում կանանց և տղամարդկանց կյանքի միջին տևողության տարբերությունը կազմել է 6 տարի (կանանց համար՝ 81.5 տ, իսկ տղամարդկանց համար 75,4 տ): Առավելագույն տարբերությունը արձանագրվել է Լիտվայում և Լատվիայում (12 տարի) և ամենափոքր տարբերությունը՝ Մալթայում, Միացյալ Թագավորությունում, Նիդերլանդներում և Շվեյցարիայում (4 տարի): Չնայած

մինչև 2050թ. թե՛ կանանց, և թե՛ տղամարդկանց համար ակնկալվում է կյանքի տևողության աճ, այնուամենայնիվ, տղամարդկանց դեպքում սովորաբար կյանքի տևողության աճը ավելի բարձր է: Սրա շնորհիվ սպասվում է, որ տարիքային անջրպետը կրճատվելու է գրեթե բոլոր անդամ պետություններում՝ որոշ տարբերություններով, որոնք տատանվում են սկսած 3 տարուց՝ Դանիայում, Կիպրոսում, Մալթայում, Շվեդիայում և մինչև 8 տարի՝ Էստոնիայում, Լատվիայում և Լիտվայում:

2005թ-ին կանանց կյանքի տևողությունը տատանվում է 75.4 տարեկանից՝ Ռումինիայում, մինչև 83.9 տարեկան՝ Իսպանիայում: 2050թ-ին այն սպասվում է հասնել 80 տարեկան և ավել բոլոր անդամ պետություններում՝ տատանվելով 82 տարեկանից՝ Ռումինիայում, մինչև 89,1 տարեկան՝ Ֆրանսիայում:

Նման երկարակեցության արդյունքների մասին է վկայում այն փաստը, որ ԵՄ-ում 2005թ-ին 65 տարեկան կամ բարձր տարիքի անձանց 59%-ը եղել են կանայք: 2050թ-ին ԵՄ բնակչության կառուցվածքի վերաբերյալ կանխատեսումները ենթադրում են այդ ցուցանիշի կրճատում մինչև 55%:

Ֆրանսիան և Իռլանդիան ունեցել են ծնելիության ամենաբարձր ցուցանիշը 2005 թվականին

2005թ. ԵՄ-ում ծնելիության ցուցանիշը 1.51 է, ընդ որում Ֆրանսիան (1.92), Իռլանդիան (1.88), Դանիան, Ֆինլանդիայի և Միացյալ Թագավորությունը (1.80) գրանցել են ամենաբարձր ցուցանիշները: Լեհաստանում (1.24), Սլովակիայում(1.25), Սլովենիայում (1.26), Լիտվայում(1.27), Չեխիայում և Հունաստանում (երկուսում էլ 1.28) արձանագրվել են ամենացածր մակարդակները:

Կանանց և տղամարդկանց գրեթե մեկ քառորդը ունի միջին մասնագիտական կրթություն:

2006թ. երկրորդ կիսամյակում ԵՄ-ում 25-59 տարեկան անձանց մի մասը ունեցել են միջին մասնագիտական կրթություն, որը գրեթե նույնն է եղել կանանց (24 %) և տղամարդկանց (23%) համար: 25-59 տարեկան Միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց ամենաբարձր տեսակարար կշիռ անդամ պետություններից ունեցել են Ֆինլանդիան (42%), Էստոնիա և Դանիա (39%), մինչդեռ ամենափոքր մասը գրանցվել է Ռումինիայում(12%), Չեխիայում և Մալթայում (13%)։ Գրեթե բոլոր անդամ պետություններում կանայք ավելի շատ ուսանել են արվեստներ և հումանիտար գիտություններ, քան տղամարդիկ, մինչդեռ հակառակը կարելի է ասել ճգրիտ գիտությունների համար:

Դանիան, Լյուքսեմբուրգը, Հունգարիան համակարգչային ամենաբարձր ունակություններ ունեցող կանանց ամենամեծ հարաբերակցությունն ունեն:

ԵՄ –ում 2006թ. երկրորդ կիսամյակում 16-76 տարեկան կանանց 15% մոտ գրանցվել է համակարգչային ունակությունների ավելի բարձր մակարդակ համեմատած այդ տարիքի տղամարդկանց 29%-ի հետ: Բոլոր անդամ պետություններում, համակարգչային ունակություններին չտիրապետող կանանց թիվն ավելի մեծ է, քան տղամարդկանցը: Գանիայում (25%), Լյուքսեմբուրգում և Իռլանդիայում (երկուսում էլ 21%) գրանցվել են համակարգչային բարձր ունակություններ ունեցող կանանց ամենամեծ հարաբերակցությունը:

Մյուս կողմից, 16-74 տարեկան կանանց 44% չի տիրապետում համակարգչային ունակությունների՝ համեմատած այս տարիքի տղամարդկանց 38%-ի հետ: Գրեթե բոլոր անդամ պետություններում համակարգչային ունակություններին չտիրապետողների թիվն ավելի մեծ է կանանց մոտ: Համակարգչային ունակություններին չտիրապետող կանանց ամենամեծ մասը գրանցվել է Բուլղարիայում (69%), Իտալիայում (64%), Պորտուգալիայում(61%) և Հունաստանում(60%):

Եվրոպական միության աշխատանք ունեցող կանանց մեկ երրորդը աշխատում է կես դրույքով:

2007թ-ի հունվարին ԵՄ-ում գործազրկության ցուցանիշը կանանց շրջանում կազմում էր 8.5%, իսկ տղամարդկանցը՝ 6.7%: Բոլոր անդամ-պետություններում կանանց մոտ ավելի բարձր ցուցանիշ էր գրանցվել, քան տղամարդկանց մոտ, բացառությամբ Իռլանդիայի, Լատվիայի, Լիտվայի, Ռումինիայի և Միացյալ Թագավորության: Գործազրկության ցուցանիշների ամենամեծ տարբերությունները անդամ-պետությունների տղամարդկանց և կանանց համար գրանցվել են Հունաստանում(13.3 % կանանց և 5.4 %՝ տղամարդկանց համար), Իսպանիայում (11.9%) և 6.2%) և Չեխիայում (8.6% և 5.1%):

2006թ. երկրորդ եռամսյակում ԵՄ-ում 15-64 տարեկան անձանց զբաղվածության ցուցանիշը 57.1% էր կանանց համար և 71.5% տղամարդկանց համար: Այդ ցուցանիշը կանանց համար բոլոր անդամ պետություններում եղել է ավելի ցածր քան տղամարդկանց համար: Կանանց զբաղվածության տոկոսը տատանվում է 34.6%-ից Մալթայում մինչև 73.2% Գանիայում: 2006թ. երկրորդ եռամսյակի տվյալներով կանանց գրեթե մեկ երրորդը աշխատում է կես դրույքով, իսկ տղամարդանց՝ 7.7%: Կես դրույքով աշխատող կանանց հարաբերակցությունը տատանվում էր 2.7%-ից՝ Բուլղարիայում մինչև 74.7%՝ Նիդերլանդներում:

2006թ-ի երկրորդ կիսամյակում կանանց 14.5%-ը ԵՄ-ում աշխատում էին ժամանակավոր հիմունքներով, իսկ տղամարդկանց՝ 13.8%-ը: Ռումինիան (1.8%), Էստոնիան (2.2%) և Լիտվան (2.8%) ունեն ժամանակավոր աշխատող կանանց ամենացածր տոկոսը, մինչդեռ Իսպանիան (37.3%), Լեհաստանը (25.6%) և Ֆինլանդիան (21.8%)՝ ունեն ամենաբարձր տոկոսը:

Հեռուստատեսություն առանց սահմանների, առանց գովազդի եւ արտադրանքի տեղադրման

Որքա՞ն հեռուստացույց էք դուք դիտում: Եվրոպացիները յուրաքանչյուր երեկո միջինը դիտում են երկու ժամ: Հետևաբար դժվար չէ պատկերացնել, որ գովազդային արդյունաբերությունը հեռուստատեսությունը համարում է որպես ընդհանուր շուկային հասնելու միջոց: Ընդհանուր շուկան գրավելու երկու հայտնի մեթոդներն են հանդիսանում՝ ուղղակի գովազդները և ավելի վիճարկելի հանդիսացող, «արտադրանքի տեղադրման» մեթոդը, երբ հեռուստատեսային աստղերին ցուցադրում են որոշակի արտադրանք օգտագործելիս: Գովազդների եւ արտադրանքի տեղադրման կարգավորումը գտնվում է փոփոխված հեռուստատեսային դիրեկտիվի ուշադրության կենտրոնում:



«Հեռուստատեսություն առանց սահմանների» Հանձնաժողովի կողմից ընդունված դիրեկտիվը տարիների ընթացքում արմատական փոփոխություններ է առաջացրել արտադրության մեջ: Վերջին տարբերակը, որը պետք է փոխարինի 1997թ. օրենքը, արտացոլում է ինտերնետի և բջջային հեռախոսների առաջընթացը և դրանց փոխարինումը համանման թվային տեխնոլոգիաներով: Առանց գովազդային շահույթի մեզ հաճույք պատճառող շատ հաղորդումներ չեն պատրաստվի: Ներկայումս Եվրոպայում մասնավոր հեռուստաընկերությունները գովազդից ստանում են կայուն 90% եկամուտ, որը համարժեք է հանրային հեռուստաընկերությունների կողմից ստացած շահույթի 29%:

Հեռուստատեսության և ֆիլմերի ժամանակակից կանոնները երաշխավորում են 20 րոպե չընդհատվող հեռարձակում, բացառությամբ լուրերի, վավերագրական, հոգևոր եւ մանկական հաղորդումների, որոնք չեն կարող ընդհատվել, եթե ամբողջ հեռարձակումը պակաս է 30 րոպեից:

Մանկական և լրատվական հաղորդումները կարող են ընդհատվել յուրաքանչյուր 30 րոպեից մեկ: Երեխաների գիրության պրոբլեմից խուսափելու նպատակով այդ գովազդային հոլովակները հաղորդումները չպետք է լինեն սննդի եւ ըմպելիքի մասին:

Գովազդները նաև չպետք է լինեն ինքնագիտակցության վրա ազդող, այսինքն ձայնը չպետք աճի հայտարարության վերջում: Դրանք նաև չպետք է լինել սեռական և ռասիստական բնույթի կամ խտրականություն առաջացնեն ցանկացած այլ ձևով:

1980-ական թվականներից սկսված գովազդի մասին հայտարարություններ տվող անձինք սկսեցին վախենալ, որ չափից ավելի գովազդումը հակառակ ազդեցություն է ունենում: Մարդիկ խուսափում էին գովազդներ դիտելուց: Այս հարցի հայտնի լուծումը հանդիսանում է, արտադրանքի տեղադրումը, երբ հերոսը խմում է, վարում է կամ հավաքում է այն ամենը, ինչ հովանավորներն են ասում նրան անել:

Հանձնաժողովի կողմից համաձայնեցված «Հեռուստատեսություն առանց սահմանների» դիրեկտիվի տեքստում Եվրոպական խորհրդարանի անդամները ցանկանում էին, որ լրատվական բնույթի հաղորդումները, ընթացիկ գործերը, վավերագրական եւ երեխաների համար նախատեսված հաղորդումները ազատ լինեն

արտադրանքի գովազդային տեղադրումից: Այնուամենայնիվ, այն կարգելվի կինոթատրոններում, հեռուստատեսային ֆիլմերի եւ սպորտային հեռարձակումների ժամանակ: Որոշ պատգամավորներ առաջարկվում էին նաև ծխախոտների եւ ծխախոտաբույսի գովազդման ամբողջական արգելում: Վերջապես, Խորհրդարանի գրեթե բոլոր պատգամավորները եկան միասնական համաձայնության, որ պետք է լինեն հաղորդումների խմբագրական անկախությունը պաշտպանող իրավական բնույթի երաշխիքներ:

Եվրոպական խորհրդարանում Գերմանիայի ժողովրդական կուսակցության ղեկավար Ռուֆ Հիերոնոմին, որը հանդիսանում էր նաև օրինագծի նախաձեռնողը, բացատրեց, որ այս քվեով Եվրոպական արտադրանքի մրցակցային անբարենպաստ պայմանները Ամերիկյան արտադրաքի հանդեպ կվերանան: Միաժամանակ մենք համամիտ ենք հեռուստադիտողի առավել իրազեկվածությանը եւ թափանցիկությանը, ովքեր, որպես կանոն տեղյակ չեն արտադրանքի տեղադրման փաստի մասին: Եթե Եվրոպական խորհրդարանի անդամները այն ընդունեն, ապա այդ միջոցները ուժի մեջ կմտնեն երկու տարվա ընթացքում:

Խաղալ Եվրոպայի համար: Ֆուտբոլային աստղերի միությունը տոնում է Եվրոպական միության 50 ամյակը²

http://europa.eu/50/index_en.htm



Եվրոպական ֆուտբոլի լավագույն հատկանիշները ի ցույց դրվեցին մարտի 13-ին Մանչեսթերում տեղի ունեցած ցուցադրական հանդիպման ժամանակ, որը նվիրված էր Հռոմի պայմանագրի ստորագրման հիսնամյա հոբելյանին, որով էլ հիմնադրվել է ներկայիս Եվրոպական Միությունը: Միևնույն ժամանակ Մանչեսթերը, նշելով ՌԻԵՖԱ-ի մրցումներին որպես առաջին անգլիական թիմ իր մասնակցության

հիսունամյա հոբելյանը, ընկերական հանդիպում ունեցավ Եվրոպա XI թիմի հետ, որը գլխավոր մարզիչն էր իտալացի աշխարհի չեմպիոն Մարչելո Լիպին: Եվրոպա XI թիմը ներառում էր շատ իտալացի աշխարհի չեմպիոններ, Բարսելոնայի և Լիվերպուլի ավագներ Կառլոս Պույոլին և Սթիվեն Ջերարդին, և Եվրոպա XI-ի համար որպես հյուրեր հրավիրվել էին նաև երեք բրազիլացի աստղեր՝ Ռոնալդոն, Ռոնալդինյոն և Ջունինյո Պեռնամբուկանուն:

Եվրոպական ինտեգրացիան և եվրոպական ֆուտբոլը երկու հաջող պատմություններ են, որոնք ձեռք ձեռքի տված առաջ են ընթանում վերջին հիսուն տարիների ընթացքում՝

² 2007թ. Բեռլինում նշվեց Եվրոպական տնտեսական ընկերակցության 1957 թ. ստորագրված Հռոմի պայմանագրի 50-ամյակը: ԵՄ ստեղծման հիմնադիր պայմանագիրը ստորագրվել է 1992թ. Մասստրիխտ քաղաքում:

նոր հորիզոններ բացելով միլիոնավոր մարդկանց համար: Ֆուտբոլը աշխարհում ամենահայտնի մարզաձևն է և վերջին աշխարհի գավաթի խաղարկությունը ցույց տվեց, որ Եվրոպան այս խաղի անվիճելի առաջատարն է ամբողջ աշխարհում:

Նախաձեռնության մեջ ունենալով իր ներդրումը՝ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Խոսե Մանուել Բարոզոն ասել է. «Դեռ մանկուց ես մեծ բավականությամբ հետևել եմ մեծն Մանչեսթեր թիմի խաղերին Եվրոպայում: Սա հոյակապ միջոց է նշելու Եվրոպական Միության ստեղծման հիսունամյա հոբելյանը՝ մեծ խաղ ֆուտբոլի միջոցով: Այն եվրոպացիներին ներշնչում է միասնականություն բոլորի կողմից հասկանալի միասնական հույզերի ու լեզվի միջոցով»:

Եվրոպան կառավարող մարմիններից մեկի՝ ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին ասել է. «Ֆուտբոլը միավորում է մարդկանց: Մի աշխարհամասում, որն այդքան հպարտ է իր մշակութային բազմազանությամբ, ֆուտբոլը առաջարկում է միասնական լեզու: Այն օգնում է համախմբել տարբեր համայնքներ: Որպես իր լավագույն կողմ՝ մեր սպորտը արտահայտում է այնպիսի Եվրոպական որոշ հիմնարար արժեքներ, ինչպիսիք են *օրենքի և իրավունքի գերակայությունը, հարգանքը մարդկանց նկատմամբ, խոսքի ազատությունը, թիմային աշխատանքը և համախմբվածությունը*: Ես շատ հպարտ եմ, որ ՈՒԵՖԱ-ն ի վիճակի եղավ կազմակերպել այս առանձնահատուկ հանդիպումը»:

Ներկայացնելով Մանչեսթեր Յունայթեթը՝ սրբ Բոբբի Չառլթոնը ասաց. «Մանչեսթեր Յունայթեթի պատմությունը կապված է Եվրոպայի հետ: Որոշ ակումբներ իրենց պատմության մեծագույն պահերը ապրել են եվրոպական բեմում: Ես անհամբերությամբ սպասում եմ, որ բարի գալուստ մաղթեմ «Օլդ Թրաֆորդ» ժամանող այդքան շատ աստղերին և իմ ընկերներին՝ տոնելու այս երկու կարևոր հոբելյանները»:

2007թ. մարտի 25-ին նշվել է Հռոմի պայմանագրի ստորագրման հիսունամյա հոբելյանը, որով հիմնադրվել են ներկայիս Եվրոպական ընկերակցությունը և Եվրոպայի ատոմային էներգիայի ընկերակցությունը: Մանչեսթերում տեղի ունեցած ֆուտբոլային հանդիպումը մեծ իրադարձություն էր, որը բարձր մակարդակով կազմակերպվել էր Միացյալ Թագավորության կողմից՝ տոնելու այդ օրը, այդ միջոցառումը գրավել է ԵՄ բոլոր 27 անդամ պետությունների և ամբողջ աշխարհի ուշադրությունը: Միևնույն ժամանակ դա հիսունամյա հոբելյան է, երբ առաջին անգլիական թիմը մուտք գործեց եվրոպական ակումբային ֆուտբոլ, որը բարեհաջող խաղում է եվրոպական ֆուտբոլը կառավարող մարմնի՝ ՈՒԵՖԱ-ի ներքո:

Այս առանձնահատուկ նախաձեռնությունը հետագայում զարգացնելու է Եվրոպական հանձնաժողովի և ՈՒԵՖԱ-ի միջև համագործակցությունը: Երկու կազմակերպություններն էլ պատրաստակամություն են հայտնել աշխատել միասին՝ եվրոպական սպորտի համար այդպիսի հաջողություն ապահոված միասնական արժեքների պահպանման ու ամրացման համար:

Այս միջոցառումից ստացված ամբողջ եկամուտը տրամադրվելու է Մանչեսթեր Յունայթեթի ֆոնդին, որը գրանցված բարեգործական ընկերություն է և ֆինանսավորում է տեղական համայնքային նախագծերը: 1992 թվականից ի վեր դրանից օգտվել է ավելի քան մեկ միլիոն մարդ:

5. ԵՎՐՈՊԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

http://europa.eu/abc/index_en.htm

Մուտքը ոչ անդամ պետություններից

Եվրոպական Միության ոչ անդամ պետություններից ԵՄ մուտք գործելիս կարող եք Ձեզ հետ բերել անձնական օգտագործման իրեր՝ առանց ավելացված արժեքի հարկի կամ ակցիզային պարտավորությունների՝ ստորև նշված սահմանափակումներով:



Նույնը կկիրառվի, եթե ԵՄ մուտք գործեք Կանադյան կղզիներից, Նորմանդական կղզիներից, Ջիբրալթարից կամ այլ վայրերից, որտեղ ավելացված արժեքի հարկի կամ ակցիզի վերաբերյալ ԵՄ կանոնները չեն կիրառվում:

ԾԽԱԽՈՏ

- 200 հատ ծխախոտ
- 100 գրամ ախաբիլլո
- 50 հատ սիգար
- 250 գրամ ծխախոտ

ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐ

Ավելի քան 22%-մբ 1 լ սպիրտ կամ 2 լ թունդ կամ շամպայն

2 լ թույլ գինի

ՕԾԱՆԵԼԻՔ

- 50 գրամ
- “Eau de toilette”՝ 250 մլ

ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Այլ ապրանքներով մուտքը ԵՄ թույլատրվում է, եթե դրանց արժեքը չի գերազանցում 175 եվրոն: Այնուամենայնիվ, ապրանքների արժեքի սահմանափակումը մինչև 90 եվրո 15 տարին չլրացած ճանապարհորդողների նկատմամբ, թույլատրվում է բոլոր ԵՄ անդամ

պետություններում՝ բացառությամբ Գանիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Էստոնիայի, Լիտվայի, Հոլանդիայի և Միացյալ Թագավորության:

Ապրանքների արժեքի՝ մինչև 175 եվրո սահմանափակման հետ մեկտեղ, Ֆինլանդիան բույլատրում է նաև 1 շնչի համար առավելագույնը 16լ գարեջուր:

Օտարերկրացիների նկատմամբ ավելացված արժեքի հարկի կիրառման ծրագիր

Ոչ անդամ պետություններից ԵՄ ժամանող այցելուները ենթակա են ավելացված արժեքի հարկի հատուցմանը այն ապրանքների համար, որոնք նրանք գնել են ԵՄ տարածքում՝ իրենց կացության ընթացքում, եթե այդ ապրանքները ներկայացվում են մաքսային մարմիններին 3 ամսվա ընթացքում՝ համապատասխան փաստաթղթերի հետ միասին: Այս փաստաթղթերը սովորաբար պատրաստվում են վաճառողի կողմից, սակայն, քանի որ այդ ծրագիրը կամավոր է, ոչ բոլոր վաճառողներն են մասնակցում դրան: Որոշ երկրներ սահմանում են հարկերի հատուցմանը ենթակա գնումների նվազագույն արժեքը: